

ՍԱՂՄՈՍ 126

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Գերությունից վերադառնալու համար գոհություն	Ցնծությամբ վերադարձ դեպի Սիոն	Ազգային դժբախտությունից ազատագրվելու համար աղոթք	Ազատության աղոթք	Վերադարձող գերիների երգը
<u>MT ներածություն</u> Աստիճանների երգը				
126:1-3	126:1-3	126:1-3	126:1-3	126:1-2բ 126:2գ-3
126:4-6	126:4 126:5-6	126:4 126:5-6	126:4-5 126:6	126:4-5 126:6

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 126:1-3</p> <p>¹Երբ ՏԵՐԸ Սիոնը գերությունից վերադարձրեց, Երազ տեսնողների պես եղանք:</p> <p>²Այն ժամանակ մեր բերանը ծիծաղով լցվեց, Ու մեր լեզուն՝ երգով:</p> <p>Այն ժամանակ հեթանոսների մեջ ասացին.</p> <p>«ՏԵՐԸ նրանց համար մեծ բաներ արեց»:</p> <p>³ՏԵՐԸ մեզ համար մեծ բաներ արեց, Դրա համար մենք ուրախ ենք:</p>
--

126:1-3 Այս պարբերությունը հակադրվում է իսրայելացիների զգացմունքներին, երբ նրանք գերությունից մեծ ցնծությամբ վերադառնում են Հուդա, Իսրայել և տանարը (այսինքն՝ Եզրաս, Նեեմիա):

Մեկնաբանների խնդիրն այն է, որ Եբրայերենի ԲԱՅԵՐԸ չեն կրում ժամանակի տարր, միայն համատեքստը կարող է որոշել անցյալ, ներկա և ապառնի ժամանակը: Հետևաբար այս առաջին համարը կարող էր՝

1. լինել հաստատություն անցյալի գործողության (հհ. 1-3)
2. հույս ապագայի գործողության համար (հհ. 4-6)
3. անցյալի գործողություն, Սաղմ. 126:1, աղոթք ՅԱՀՎԵԻՆ, որպեսզի դարձյալ այդպես գործի՝ Սաղմ. 126:4:

126:1 «ՏԵՐԸ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

❖ **«վերադարձրեց»** Այս ԲԱՅԸ (BDB 996, KB 1427, *Qal* ԱՆՈՐՈՇ ԲԱՂԱԴՐՅԱԼ) ունի լայն ստուգաբանական դաշտ: Այն սովորական բառ է, որը կիրառվում է «ապաշխարության» համար (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՊԱԾԵԱՐՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)) «դառնալ» կամ «վերադառնալ» հիմնական նշանակությամբ: Այն երկրորդ իմաստն է, որը կարծես թե ներառված է Սաղմ. 126:1-ում (JPSOA՝ հիմնված Սաղմ. 85:1-ի վրա, ունի «վերականգնել», տես նաև՝ Սաղմ. 14:7, 53:6):

Քանի որ «Աստիճանների Սաղմոսներից» մի քանիսը արտացոլում են Եզրասի, Նեեմիայի ժամանակաշրջանը (այսինքն՝ Կյուրոս թագավորի հրամանագիրը Բ. Ա. 538թ-ին թույլ տալով բոլոր գերեվարված ժողովուրդներին վերադառնալ տուն և վերակառուցել իրենց ազգային տաճարը), այս Սաղմոսը կարող է արտացոլել նաև հետգերության այդ ժամանակաշրջանը:

Պարզապես աստվածաբանական մի գրառում. գերությունից նրանց ազատությանը պետք է որ նախորդած լինել իրենց առաջին դարձը դեպի ՅԱՀՎԵՆ:

❖ **«գերությունից»** Այստեղ առկա է հավանական շտկում (այստեղ և Սաղմ. 126:4-ում) որին հետևում է JPSOA, «Երբ ՅԱՀՎԵՆ վերականգնի Սիոնի ժառանգությունը»:

1. վերադարձրեց - *חָבַשׁ* (BDB 1000 II), MT
2. վերականգնեց - *חָבַשׁ* (BDB 986), JPSOA, տես՝ Սաղմ. 85:1

«Ժառանգություն» տերմինը մատնանշում է բարգավաճում (TEV ծանոթագրություն): Այն կարող է լինել տեսանելի նշան ՅԱՀՎԵԻ հետ վերականգնված ուխտի և դրա խոստացված օրհնությունների համար (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30):

❖ **«Սիոն»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍԻՈՆ

❖ **«երազ տեսնողների պես»** Սա վերադարձողների ցնծությունը արտահայտող բնութագրական մի քանի արտահայտություններից առաջինն է:

1. Սաղմ. 126:1բ
2. Սաղմ. 126:2ա
3. Սաղմ. 126:2բ
4. Սաղմ. 126:2գ-դ
5. Սաղմ. 126:3

Այս զգացմունքները ՅԱՀՎԵԻ հետ փոխհարաբերության վերջնական արդյունքը:

DSS և LXX «երազ»՝ *עֵרָא* (BDB 321 II) տերմինը դիտարկում է որպես «առողջ լինել», «ուժեղ լինել» (տես՝ REB). արմատը հեզվում է ճիշտ նույն կերպ: Peshitta-ն տալիս է «մենք նրանց պես էինք, որ ցնծում են»:

126:2գ-դ «այն ժամանակ հեթանոսների մեջ ասացին» Այս արտահայտությունը վերահաստատում է առանցքային աստվածաբանական մի հայտարարություն, որ ՅԱՀՎԵՆ ուզում էր օգտագործել Իսրայելի հետ Իր փոխհարաբերությունը որպես ազգերին հասնելու՝ փրկելու միջոց (տես՝ Սաղմ. 46:10):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 126:4-6

⁴Մեր գերությունը շրջիր, ո՛վ ՏԵՐ,

Հարավի վտակների պես:

⁵Նրանք, որ արցունքով են ցանում, ցնծությամբ են հնձելու:

⁶Նա, ով լալով է գնում՝ թանկագին սերմը տանելով,

Անկասկած ցնծալով է վերադառնալու՝

Իր խրճերը բերելով:

126:4ա Այս ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ (ինչպես Սաղմ. 126:1ա-ի ԱՆՈՐՈՇ ԲԱՂԱԴԻՅԱԼԸ) դժվար է հասկանալ: Եթե Սաղմ. 126:1 հաստատում է գերիների վերադարձը, ինչո՞ւ է Սաղմ. 126:4 արդյունքում նրանց վերադարձի համար: Ահա թե ինչու է JPSOA կիրառում Սաղմ. 85:1-ի օրինակը հաստատելու, որ այն նկատի ունի բարգավաճման վերադարձը:

126:4բ Սա աշխարհագրական նկարագրություն է կապված անապատում ջրի վտակների հետ (այսինքն՝ Նեգեվը), որոնք կոչվում են ջրամբարներ: Սրանք ջրով լցվելը մեծ օրհնության նկարագրություն է հետագա գյուղատնտեսական առատության համար (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30)՝

1. ուխտի հնազանդության շնորհիվ
2. ազգի ապաշխարության շնորհիվ
3. ՅԱՀՎԵԻ խոստացված օրհնությունների շնորհիվ

126:5-6 Սաղմ. 126:4բ-ում առատ ջրի խոստումը տարածվում է այլ գյուղատնտեսական դարձվածքների վրա: «Արցունքները» (BDB 199) կարող է վերաբերել՝

1. ուրախության արցունքներին՝ ուխտի նորոգության համար (այսինքն՝ Իսրայելը վերադարձել է կաթ ու մեղր բխող երկիրը, տես՝ Երեմ. 31:16)
2. Իսրայելի ապաշխարության արցունքները

126:6 Այս համարում առկա է ուժգնացման քերականական ձևաչափի երկու օրինակ: Երկու անգամ օգտագործվում են երբայերեն արմատի ԱՆՈՐՈՇ ԲԱՅԱՐՁԱԿ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԸ:

1. նա, ով հետուառաջ է անում – BDB 229, KB 246
2. անկասկած վերադառնալու է – BDB 9, KB 112

Հավատքով՝ ապաշխարությամբ ցանողները անկասկած հնձելու են (տես՝ 2 Օրինաց 30:1-10): Սա մարգարեացված է Ամոս 9:11-15-ում: Ղևտացիների 26 և 2 Օրինաց 27-30-ի ուխտի օրհնությունները իրական են:



NASB

NKJV, NRSV

REB, NJB, LXX

JPSOA

«սերմի պարկը»

«սերմերը կրելով»

«սերմը տանելով»

«խրճեր»

Այս բառը (BDB 604 I) կիրառվում է Հոբ 28:18-ում «վեր կրել» իմաստով և այստեղ հավանաբար թելերով պայուսակը վեր բարձրացնելու իմաստով: ԲԱՅԻ ձևը նշանակում է «բաշել» կամ «հանել» (տես՝ Ամոս 9:13):

ՀԿ-ի Թ-ինդեյլ Մեկնության Շարքը (հատոր՝ 16, էջ՝ 476) ասում է, որ ԲԱՅԸ նկատի ունի սերմերի (այսինքն՝ միաժամանակ մի շարքի, ոչ թե շաղ տողով ցանքի) շավիղը:

Մեկը չի կարող հնձել, եթե չի ցանել: Տես ամբողջական գրառումը Գաղատացիների 6:7-ում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է դժվար իմանալ այս Սաղմոսի պատմական միջավայրը:
2. Ինչպե՞ս է Սաղմոս 126:1-ը թվացյալ հակասում Սաղմոս 126:4-ին:
3. Ո՞րն է Սաղմ. 126:2գ-դ-ի աստվածաբանական կիրառությունը:
4. Սահմանե՛ք Նեգևը:
5. Ի՞նչ նկատի ունի Սաղմ. 126:5-ի «լացելը»: